Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասով, 225-րդ հոդվածի 1-ին մասով, 46-րդ հոդվածի 3-րդ մասով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին Հայաստանի հանրապետության օրենքի» 30-րդ հոդվածի 1-ին մասի բ/ ենթակետով և 34-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վարդգես Վիտալիստի Ղազարյանից գանձել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Արթիկ քաղաքի Նարեկացու փողոց 10/1 հասցեում գտնվող անշարժ գույքի հարկի գծով չվճարած հարկային պարտավորությունների արդյունքում գոյացած պարտքը՝ 20992/քսան հազար ինը

հարյուր իննսուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ներառյալ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը:

2.Որոշման օրինակը ուղարկել Վարդգես Վիտալիստի Ղազարյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

4.Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70, 71–րդ հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից 2ամսյա ժամկետում:

5.Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն, միաժամանակ ներկայացնել սույն ակտն անբողոքարկելի դառնալու օրվա դրությամբ առկա գանձման ենթակա չվճարված հարկերի տույժերի հաշվարկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 392-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 438 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթով և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հրանուշ Արշակի Մաթևոսյանի 2023 թվականի ապրիլի 19-ի № 2518 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 26-ի «Արթիկ քաղաքի բնակիչ Հրանուշ Արշակի Բաբոյանի Լմբատ-2 թիվ 13 շենքի թիվ 7 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց իրեն հատկացնելու մասին» թիվ 438 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Հրանուշ Արշակի Բաբոյան»-ի փոխարեն գրել՝ «Հրանուշ Արշակի Մաթևոսյան»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 393-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԵՂԻՇԵ ԿԱՄԱԼԵՆԿՈՅԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 45-րդ և 45.1 կետերով և հիմք ընդունելով Եղիշե Կամալենկոյի Աբրահամյանի 2023թվականի ապրիլի 17-ի N 2465 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի բնակիչ Եղիշե Կամալենկոյի Աբրահամյանին (ծնված 1970 թվականի հուլիսի 12-ին) պատկանող 2023 թվականի ապրիլի 17-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով /N 17042023-08-0005/ փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնք Արթիկ քաղաք Տոնականյան փողոց 26 շենք 1 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Արթիկ քաղաք Տոնականյան փողոց 26 շենք 27 բնակարան հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 394-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ 1-ԻՆ ԽՃՈՒՂԻ 11 ՄԱՆԱԿՊԱՐՏԵԶ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք սեփականություն հանդիսացող N14122022-08-0079 սեփականության իրավունքի վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք, գյուղ Մեծ Մանթաշ 1-ին խճուղի 11 հասցեում գտնվող 08-079-0022-0032 կադաստրային ծածկագրով, 0,44հեկտար մակերեսով հողամասը և ամրակայված շենք–շինությունները անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության՝ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 38-րդ կետի ա/ ենթակետով և 39-րդ կետով և հիմք ընդունելով, որ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի թիվ 50-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք սեփականություն հանդիսացող N14122022-08-0079 սեփականության իրավունքի վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք, գյուղ Մեծ Մանթաշ 1-ին խճուղի 11 հասցեում գտնվող 08-079-0022-0032 կադաստրային ծածկագրով, 0,44հեկտար մակերեսով հողամասը և ամրակայված շենք–շինությունները անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Մեծ Մանթաշի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 395-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ 18-ՐԴ ՓՈՂՈՑ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք սեփականություն հանդիսացող N04092022-08-0028 սեփականության իրավունքի վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք, գյուղ Սպանդարյան 18-րդ փողոց 3 մանկապարտեզ հասցեում գտնվող 08-107-0016-0002 կադաստրային ծածկագրով, 0,32431հեկտար մակերեսով հողամասը և ամրակայված շենք–շինությունները անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Սպանդարյան նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության՝ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 38-րդ կետի ա/ ենթակետով և 39-րդ կետով և հիմք ընդունելով, որ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի թիվ 51-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք սեփականություն հանդիսացող N04092022-08-0028 սեփականության իրավունքի վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք, գյուղ Սպանդարյան 18-րդ փողոց 3 մանկապարտեզ հասցեում գտնվող 08-107-0016-0002 կադաստրային ծածկագրով, 0,32431հեկտար մակերեսով հողամասը և ամրակայված շենք–շինությունները անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Սպանդարյանի նախադպրոցական ուսումնական հաստատության>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 396-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳԵՂԱՆԻՍՏ 1-ԻՆ 6/1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԵՂԱՆԻՍՏԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք սեփականություն հանդիսացող N 08012018-08-0047 սեփականության իրավունքի վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք, գյուղ Գեղանիստ 1-ին փողոց 6/1 մանկապարտեզ հասցեում գտնվող 08-030-0041-0023 կադաստրային ծածկագրով, 0,424649հեկտար մակերեսով հողամասը և ամրակայված շենք–շինությունները անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության՝ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 38-րդ կետի ա/ ենթակետով և 39-րդ կետով և հիմք ընդունելով, որ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի թիվ 52-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք սեփականություն հանդիսացող N08012018-08-0047 սեփականության իրավունքի վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք, գյուղ Գեղանիստ 1-ին փողոց 6/1 մանկապարտեզ հասցեում գտնվող 08-030-0041-0023 կադաստրային ծածկագրով, 0,424649հեկտար մակերեսով հողամասը և ամրակայված շենք–շինությունները անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 397-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԳԱՐԻԿ ՍԱՅԱԹԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշմամբ սահմանված <<Պետության և համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի թիվ 54-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի Արթիկ քաղաքի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից Շիրակացու փողոց 25 հասցեում գտնվող Գարիկ Սայաթի Ասատրյանի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի գործառնական նշանակության հողամասին (անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով N 10012020-08-0017, տրված 2010 թվականի հունվարի 10-ին) կից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Շիրակացու փողոց 25/2 հասցեում գտնվող 0,01422հա մակերեսով հողամասը՝ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14032023-08-0013, տրված 2023թվականի մարտի 14-ին) որպես ընդլայնում ուղղակի վաճառքով օտարել Գարիկ Սայաթի Ասատրյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքով օտարման գին հաստատել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 1քմ-ի համար 2887,5 (երկու հազար ութ հարյուր ութանասունյոթ դրամ հինգ լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Արթիկ համայնքի բյուջեի 900205101307 հաշվե համարին 410603(չորս հարյուր տաս հազար վեց հարյուր երեք) Հայաստանի Հանրապետության դրամ հողի վաճառքի վճարը:

4.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գարիկ Սայաթի Ասատրյանին օրենքով սահմանված կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 398-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՄԶԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԱՍՄԻԿ ՍԱՄՍՈՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ԿԱՐԱՊԵՏ ՎՐԵԺԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐ ՍԱՐԻԲԵԿԻ ՉՈՓԻԿՅԱՆԻՆ, ՎՐԵԺ ԿԱՐԱՊԵՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԵՎ ՍԵՎԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Կարապետ Վրեժի Գևորգյանի 2023 թվականի ապրիլի 13-ի N 2397 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Պեմզաշեն գյուղում Հասմիկ Սամսոնի Գևորգյանին (ծնված 1933 թվականին), Կարապետ Վրեժի Գևորգյանին (ծնված 1956 թվականի հունվարի 10-ին), Գոհար Սարիբեկի Չոփիկյանին (ծնված 1956 թվականի մարտի 09-ին), Վրեժ Կարապետի Գևորգյանին (ծնված 1982 թվականի փետրվարի 19-ին) և Սևակ Կարապետի Գևորգյանին (ծնված 1983 թվականի օգոստոսի 02-ին) 1991թվականի մայիսի 15-ի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի N 1 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Պեմզաշեն գյուղում գտնվող 08-093-0085-0013 կադաստրային ծածկագրով 0,29192հա մակերեսով հողամասին և անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Պեմզաշեն 1-ին փողոց 12-րդ փակուղի 6 բնակելի տուն հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 399-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՍՈՒՐԵՆ ՎԱՐՇԱՄԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ (1/2) ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐՇԱՄԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ (1/2) ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Խաչատուր Վարշամի Մովսիսյանի 2023թվականի ապրիլի 12-ի N 2372 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի բնակիչներ Սուրեն Վարշամի Մովսիսյանին (ծնված 1961 թվականի սեպտեմբերի 10-ին) և Խաչատուր Վարշամի Մովսիսյանին (ծնված 1957 թվականի փետրվարի 06-ին) պատկանող 2023 թվականի մայիսի 10-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով /10052012-08-0143/ փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Անկախության փողոց 1-ին նրբանցք թիվ 3 հասցեում գտնվող բնակելի տնից առանձնացվող 0,02625հա մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ Անկախության փողոց 3 բնակելի տուն հասցեն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի բնակիչներ Սուրեն Վարշամի Մովսիսյանին և Խաչատուր Վարշամի Մովսիսյանին պատկանող 2023 թվականի մայիսի 10-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով /10052012-08-0143/ փաստագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Անկախության փողոց 1-ին նրբանցք թիվ 3 հասցեում գտնվող բնակելի տնից առանձնացվող 0,01624հա մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ Անկախության փողոց 3/1 բնակելի տուն հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 400-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, հիմքընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի ապրիլի 20-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-20042023-08-0049 որոշումը և Հովհաննես Ռազմիկի Պետրոսյանի 2023 թվականի հունվարի 11-ի թիվ 126 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Նոր Կյանք գյուղում գտնվող Հովհաննես Ռազմիկի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում կառուցված ինքնակամ կառույցներն օրինականացնելու մասին» թիվ 41-Ա որոշման նախաբանում «իրավունքների պետական գրանցման վկայականը» բառերից ո հետո ավելացնել «2023 թվականի հունվարի 24-ի հաշվառման(չափագրման) տվյալների մուտքագրման թիվ 2023V3GM7D տեղեկանքը» թվերն ու բառերը:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում Հովհաննես Ռազմիկի Պետրոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 401-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՆԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՀԱՆ ՋԱՆԻԿԻ ՍԵԽԼԵՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 8-րդ կետով, 9-րդ, 11-րդ, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, հիմք ընդունելով 2020 թվականի հոկտեմբերի 8-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը և Վահան Ջանիկի Սեխլեյանի 2023 թվականի փետրվարի 21-ի թիվ 1235 դիմումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղի 10-րդ փողոց 8 բնակելի տուն հասցեում գտնվող Վահան Ջանիկի Սեխլեյանին (ծնված՝ 1971 թվականի հոկտեմբերի 29-ին) սեփականության իրավունքով պատկանող, 08-113-0104-0004 կադաստրային ծածկագրով հողատարածքում ինքնակամ կառուցված 603,19քմ արտաքին մակերեսով ջերմոցը ճանաչել օրինական:
2. Հողամասում 2001 թվականից հետո կառուցված շենք-շինությունները ճանաչել ինքնակամ:
3. Ընդունել ի գիտություն, որ

1) Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
2) Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

4. Սահմանել, որ սեփականատերը

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Արթիկ համայնքի բյուջեի 900205101125 հաշվին պետք է վճարի 316313 (երեք հարյուր տասնվեց հազար երեք հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամ շինության օրինականացման վճարը:
2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5. 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահան Ջանիկի Սեխլեյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 402-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԱՇԱ ԴԱՎԻԹԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ, ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՄՎԵԼԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՔՍԻՄ ՅԱՇԱՅԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժգույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Մաքսիմ Յաշայի Կուրղինյանի 2023 թվականի մարտի 27-ի թիվ 1992 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Սպանդարյան գյուղում Յաշա Դավիթի Կուրղինյանին (ծնված՝ 1937 թվականի ապրիլի 4-ին), Սիրանուշ Սամվելի Կուրղինյանին(ծնված՝ 1940 թվականի սեպտեմբերի 3-ին) և Մաքսիմ Յաշայի Կուրղինյանին (ծնված՝ 1970 թվականի փետրվարի 8-ին) 2004 թվականի մայիսի 31-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 1414910 վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում գտնվող 08-107-0021-0009 կադաստրային ծածկագրով, 0,212հա մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Արթիկ համայնք,գյուղ Սպանդարյան 1-ին փողոց 5-րդ նրբանցք 2 բնակելի տուն հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 403-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԱՇԱ ԴԱՎԻԹԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ, ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՄՎԵԼԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՔՍԻՄ ՅԱՇԱՅԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժգույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Մաքսիմ Յաշայի Կուրղինյանի 2023 թվականի մարտի 27-ի թիվ 1992 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Սպանդարյան գյուղում Յաշա Դավիթի Կուրղինյանին(ծնված՝ 1937 թվականի ապրիլի 4-ին) , Սիրանուշ Սամվելի Կուրղինյանին(ծնված՝ 1940 թվականի սեպտեմբերի 3-ին) և Մաքսիմ Յաշայի Կուրղինյանին (ծնված՝ 1970 թվականի փետրվարի 8-ին) 2004 թվականի մայիսի 31-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 1414911 վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում գտնվող 08-107-0002-0019 կադաստրային ծածկագրով, 0,205հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Արթիկ համայնք,գյուղ Սպանդարյան 7-րդ փողոց 1-ին փակուղի 7/1 հողամաս հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 404-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԲԱԳՐԱՏ ՌԱՖԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ԺՈՐԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՄ ԲԱԳՐԱՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ **ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված անշարժգույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ, 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Անահիտ Ժորայի Ավետիսյանի 2023 թվականի փետրվարի 22-ի թիվ 1255 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Արթիկ համայնքի Սպանդարյան գյուղում Բագրատ Ռաֆիկի Ավետիսյանին(ծնված՝ 1965 թվականի սեպտեմբերի 4-ին), Անահիտ Ժորայի Ավետիսյանին(ծնված՝ 1968 թվականի հուլիսի 10-ին) և Արամ Բագրատի Ավետիսյանին (ծնված՝ 1989 թվականի դեկտեմբերի 21-ին) 2004 թվականի մայիսի 31-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 1414917 վկայականով փաստագրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում գտնվող 08-107-0011-0027 կադաստրային ծածկագրով, 0,301հա մակերեսով հողամասին և ամրակայված շենք-շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Արթիկ համայնք,գյուղ Սպանդարյան 15-րդ փողոց 2-րդ փակուղի 24 բնակելի տուն հասցեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 405-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՏԱԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՏԱՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԱՄՐԱԿԱՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՎԵՏԻՔ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՖԼՈՐԱ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ավետիք Սամվելի Հարությունյանի 2023 թվականի ապրիլի 10-ի թիվ 2341 դիմումը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ գյուղում գտնվող 08-105-0049-0005 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,17984 հա, որը օգտագործում են Մարիամ Մկրտչի Հարությունյանը(ծնված՝ 1962 թվականի մարտի 20-ին), Ավետիք Սամվելի Հարությունյանը(ծնված՝ 1984 թվականի օգոստոսի 24-ին) և Ֆլորա Սամվելի Հարությունյանը (ծնված՝ 1985 թվականի հոկտեմբերի 22-ին): Օրինական 0,17984 հա մակերեսով հողամասը առկա շենք-շինություններով օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը(2023 թվականի մարտի 27-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, գրանցամատյան թիվ 1233), և Մարիամ Մկրտչի Հարությունյանի, Ավետիք Սամվելի Հարությունյանի և Ֆլորա Սամվելի Հարությունյանի բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի՝ ըստ դրա

գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեստրի ստեղծման և վարման կարգի 28-րդ կետով, 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 53-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Արթիկ համայնք, գյուղ Սարատակ 1-ին փողոց 27/1 բնակելի տուն հասցեն:

2.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Սարատակ գյուղի 1-ին փողոց 27/1 բնակելի տուն հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Մարիամ Մկրտչի Հարությունյանի, Ավետիք Սամվելի Հարությունյանի և Ֆլորա Սամվելի Հարությունյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 0,17984 հա մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0,17984 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

3.Հողամասում 2001 թվականից հետո կառուցված շենք-շինությունները ճանաչել ինքնակամ:

4.Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիամ Մկրտչի Հարությունյանին, Ավետիք Սամվելի Հարությունյանին և Ֆլորա Սամվելի Հարությունյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 406-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՌՈՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի ԹԻՎ 54 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի ապրիլի 11-ի գույքի նկատմամբ իրավունքի(սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-11042023-08-0144 որոշումը և Վաչագան Սամվելի Աբգարյանի 2023 թվականի փետրվարի 20-ի թիվ 1099 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հոռոմ համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության Հոռոմ համայնքի 5 փողոց, 39 տուն հասցեում գտնվող 0,124հա բնակելի տունը, կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Նարինե Բարսեղյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» թիվ 54 որոշման 2-րդ կետում «ե.» ենթակետից հետո ավելացնել ենթակետ հետևյալ բովանդակությամբ «զ. Անի Սամվելի Փիլոյան»:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում Նարինե Խաչիկի Բարսեղյանին, Ագապի Սամվելի Խաչատրյանին, Վաչագան Սամվելի Աբգարյանին, Վան Սամվելի Աբգարյանին և Անի Սամվելի Փիլոյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 407-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀԵ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՊԵՏՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՉՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ՊԱՐՏՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի եկամուտների կառավարման համակարգի տվյալների Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Շահումյան փողոց 5 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վահե Մերուժանի Պետոյանին:

Վահե Մերուժանի Պետոյանի կողմից պատշաճ չի կատարվել նշված անշարժ գույքի համար օրենքով սահմանված հարկային պարտավորությունները: Ինչի արդյունքում գոյացել է անշարժ գույքի հարկի գծով պարտք 547242 /հինգ հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր քառասուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ հաշվարկված տույժերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ,,բ" կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի ապրիլի 20-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Վահե Մերուժանի Պետոյանին: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին և վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Վահե Մերուժանի Պետոյանի բացակայությամբ:

Միաժամանակ մինչև օրենքով սահմանված կարգով վարչական վարույթի լսումների անցկացումը Վահե Մերուժանի Պետոյանի կողմից վճարվել է անշարժ գույքի հարկի գծով գոյացած ամբողջ պարտքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին Հայաստանի հանրապետության օրենքի» 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վահե Մերուժանի Պետոյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Շահումյան փողոց 5 հասցեում գտնվող անշարժ գույքի հարկի գծով չվճարած հարկային պարտավորությունների արդյունքում գոյացած պարտքի գանձման նպատակով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Որոշման օրինակը ուղարկել Վահե Մերուժանի Պետոյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70, 71-րդ հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից 2ամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023թվական ապրիլի 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկի համայնքապետարան, ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1,
հեռ՝ 374 244 52021, փոստային դասիչ՝ 3001, էլ. փոստ՝ artikmun@mail.ru, ինտ, կայք՝ www. artik.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2023 թվականի N 408-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԳԻՆ ԱԶԱՏԻ ՎԱՐԴԱՆԱՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 105/1- 105/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՉՎՃԱՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի եկամուտների կառավարման համակարգի տվյալների Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Արթիկ քաղաքի Գրիգոր Նարեկացու փողոց 105/1-105/5 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Անգին Ազատի Վարդանայանին:

